



**CR
RC**



Այս հետազոտությունը իրականացվել է Եվրասիա հիմնադրամի ծրագիր հանդիսացող և Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌԿԿ) - Հայաստան կենտրոնի Հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ ուղղված տեղեկատվական և քարոզչական նյութեր

Դրամաշնորհ # C05-7115

Երևան, Հայաստան, 2006-02-10

1 Կոգնիտիվ տեխնոլոգիաների չեզոքացմանն ուղղված քարոզչության նյութեր

1. Նյութական կաշառք:

Յուրաքանչյուր ընտրության ժամանակ մենք բոլորս առնչվում ենք ընտրակաշառք կոչվող երևույթին: Շատերը ընտրակաշառք են կոչում միայն տրվող կանխիկ փողը, բայց իրականում ընտրակաշառք են նաև ընտրությունների նախաշեմին արվող տարաբնույթ բարեգործությունները:

Հայտնի է, որ տարբեր արարքներից ու նախաձեռնություններից հետո բոլոր մարդիկ էլ սովորաբար արդարացնում են իրենք իրենց. ընտրակաշառքը ևս բացառություն չէ: Մարդիկ սովորաբար մինչև վերջ չեն հասկանում երևույթի էությունը. ի՞նչ են իրենք վաճառում:

1. Մի դժգոհիր ապագայից. դու այն արդեն վաճառել ես 2000 դրամով:
2. Կանգ առ կորուստների կեսճանապարհին. մի վաճառիր ապրելու քո իրավունքը:
3. Մի՞թե դու հաճույք ես ստանում անբարոյականությանը զբաղվելուց: Թե՞ 2000 դրամը հանգստացնում է քո խիղճը:
4. Մի արդարացիր սոցիալական պայմաններով: Կամ հետևողական եղիր և քաղաքացիական պարտքից հետո վաճառիր ամուսնականը:
5. Արդյո՞ք բարեգործությունն արդարացնում է անբարոյականությունը: Մի հավատա նախընտրական բարեգործներին:
6. Քեզ միայն կհարցնեն, թե ինչ արեցիր քո 2000 դրամը: Քո երեխաները դժվար թե հպարտանան քեզնով:
7. Մարդկանց սովորաբար թվում է, որ իրենց ձայնը կամ իրենց դիրքորոշումը չի կարող որոշիչ լինել: Այս գիտակցությունն օգնում է, որ մարդ ավելի հեշտ համաձայնվի ընտրակաշառք վերցնելուն: Երբեմն ընտրակաշառք բաժանողներն իրենք են նման թյուր կարծիքներ տարածում՝ իրենց գործն ավելի հեշտացնելու համար: Բայց իրականում և հարյուրը, և միլիոնը բաղկացած են մեկերից:

2. Ճնշում:

Միշտ էլ մարդուն բնորոշ է եղել սպառնալը, երբ նա չի կարողացել կամ չի ուզեցել իր կարծիքը հիմնավորել ուրիշի համար: Բայց միշտ էլ սպառնալիքներին տեղի տալը համարվել է թուլության, վախկոտության նշան և մերժվել է իրենց հարգող մարդկանց կողմից: Եվ եթե սպառնալն ազդեցություն է թողնում, սպառնացողը միայն ավելի է ոգևորվում և սկսում է ավելի շատ պահանջել:

Մեր իրականության մեջ սպառնալիքները և տարաբնույթ ճնշումները շատանում են հատկապես ընտրությունների նախօրյակին:

1. Ինչո՞ւ ես այդքան վախեցած: Էլեկտրի՞կն է ավելի սարսափելի, նրա ասած թեկնածո՞ւն, թե՞ ապագայից քեզ նայող երեխայիդ աչքերը:
2. Այդքան մի վախեցիր. մեկ է՝ ամեն ինչ դու ես որոշում:

3. Մի՞թե՞ն այն, որ դուք մի գյուղից եք, պարտավորեցնում է նույնպիսի ապագա ցանկանալ՝ նույն թեկնածուին ընտրելով: Թե՞ն՞ դու խուսափում ես քո սեփական ապագայից:
4. Վախեցրած ընտրություն՝ սարսափելի ապագա:
5. Փորձիր սիրել քո երկիրը. վախից մի ընտրիր:
6. Մի՞թե՞ն դու ստիպված ես ապրում. փորձիր փոխել դա ազատ ընտրությամբ:
7. Ահաբեկչությունը սպառնալու, ճնշում գործադրելու ձև է: Միջազգային փորձը ցույց տվեց, որ երբ պետությունները համաձայնում են կատարել ահաբեկիչների պահանջները, այսինքն՝ զիջում են ահաբեկիչների սպառնալիքներին, հետո պատժվում են նոր ու ավելի սարսափելի ահաբեկչություններով: Այս պատճառով վաղուց արդեն միջազգային ընդունված պրակտիկա է այն, որ երբևէ չի կարելի կատարել ահաբեկիչների պահանջները:

3. Պարտավորեցում:

Ընդունված կարծիք է, որ ազատությունը Աստծո շնորհն է մարդուն: Որ դա աստվածային այն հատկանիշն է, առանց որի մարդ չի կարող երջանիկ լինել: Թե՛ն մարդ հաճախ ինքնական հրաժարվում է իր ազատությունից՝ այն փոխելով առավել ապահով վիճակի հետ:

Իսկ հասարակական կյանքում մարդու ազատությունը դրսևորվում է ընտրության միջոցով: Երբեմն մարդիկ ինքնական հրաժարվում են ազատ ընտրության հնարավորությունից՝ խոստանալով քվեարկել այս կամ այն թեկնածուի օգտին:

1. Ինչո՞ւ ես մասնակից դառնում ընտրակեղծիքին: Քեզ գոնե դժգոհողի իրավունքը թող:
2. Մի՞Բ շփոթիր պարտականությունը բարեգործության հետ: Նախընտրական բարեգործություն չի լինում:
3. Եթե՞ն այդքան ազնիվ ես, որ պետք է քվեարկես խոստումիդ համաձայն, ինչո՞ւ քո խղճին ու երեխաներիդ չես խոստանում:
4. Եթե՞ն քեզ մեքենայով մի տեղ են տանում, ուրեմն ինչ որ ասեն, պիտք է անե՞ս: Եվ հետո դա համարելո՞ւ ես «ազնվություն»:
5. Ինչո՞ւ ես ձգտում յուրային երևալ օտարների մեջ: Ինչո՞ւ ես հավատում, երբ քեզ «յուրային» է համարում կիսաքրեական մեկը:

4. Անտարբերություն, քաղաքացիական կեցվածք:

Երբ մարդն անտարբեր է իր շրջապատում կատարվող զարգացումների նկատմամբ, նա ստրուկ է: Անտարբերությունը ստրուկին բնորոշ հատկանիշ է. անազատ մարդն է անում միայն այն, ինչ իրեն հանձնարարվել է: Հակառակ սրան՝ ազատը կամ քաղաքացին միշտ աշարժորեն հետևում է իր շրջապատի փոփոխություններին, քանի որ այդ շրջապատով է պայմանավորված նրա ազատությունը:

1. Ինչի՞ հանդեպ ես անտարբեր: Քո հաշվին փող աշխատելո՞ւ, թե՞ քո սիրելիների ապագայի:

2. Թեև կուգ «դեմ» քվեարկիր բոլորին: Բայց մի եղիւր անտարբեր:
3. Եթե քեզ համար մեկ է, թե՛ ով կընտրվի, ինչն՞ ու պետք է ընտրվողին հետաքրքրի, թե՛ ինչ խնդիրներ ունեն դու:
4. Անտարբերությունը ստրուկին հատուկ հատկանիշ է: Գուցե փորձե՞ս քաղաքացի դառնալ:
5. Ինչն՞ ու արդարացնում քո անտարբերությունը: Սա քո երկիրն է, և դու պետք է որոշես, թե՛ ով պետք է այն ղեկավարի:
6. Քո անտարբերությունն է կործանում մեր երկիրը:
7. Անտարբեր վերաբերմունքն անարգանք է քո նախնիների ու սիրելիների նկատմամբ:
8. Մի թող կեղծեն քո ապագան:

5. Հանձնաժողովի աշխատանքը:

Պետությունը համակարգ է, որը պետք է ապահովի իր քաղաքացիների անվտանգությունը: Եվ երբ այդ համակարգի մի առանձին մաս՝ պաշտոնյան, սկսում է սուբյեկտիվություն դրսևորել, համակարգի տրամաբանությամբ չհամապատասխանող որոշումներ կայացնել, գերազանցել իր լիազորությունները, պետությունը դառնում է չարիք: Պետական համակարգի մաս դառնալը պատասխանատվություն է, իսկ վերջինիցս խուսափելու յուրաքանչյուր փորձ պատժվում է:

1. Երբ համաձայնում ես ձայներ կեղծել, չե՞ս մտածում, որ նույնկերպ վարվելու եմ նաև քեզ հետ:
2. Դու, վաճառված ոստիկանը, կաշառվող դատավորն ու անտարբեր պաշտոնյան նույն շղթայի տարբեր օղակներն եք: Կարող ես հպարտանալ:
3. Հպարտացիր. դու չես հարգում քո ժողովրդի ընտրությունը:
4. Հանձնաժողովում մի կերուխումն օգնեց, որ դու էլ դառնաս հանցագործ: Այդքա՞ն էր քո սկզբունքայնությունը:
5. Հետո ի՞նչ ես պատմելու քո երեխաներին: Ինչպե՞ս էիր կեղծում նրանց ապագան:
6. Մի՞թե չէիր կարող ավելի սկզբունքային լինել: Ինչն՞ ու ինքնակամ հրաժարվեցիր քո իրավունքից:

6. Պաշտոնյաներ:

1. Ինչն՞ ու չես հարգում քո ժողովրդի ընտրելու իրավունքը: Որ քեզ նման գավա՞կ է ունեցել:

2. Դու ես պետությունը, դու ես ապագայի երաշխավորը: Քո պաշտոնն ընտրություն կեղծելու համար չէ:
3. Անցնելու է քո ժամանակը: Հետո ամաչելու ես »ընտրություն« բառն օգտագործել: Այդ բառից մարմնովդ սարսուռ է անցնելու:
4. Քո ամեն կեղծիքից հետո երկիրն ավելի է դատարկվում: Ինչո՞ւ ես ապրիլի 24-ին գնում Ծիծեռնակաբերդ:
5. Պաշտոնի չարաշահումը վաղ թե՛ն ուշ պատժվելու է: Թե՛կուզ մեկ այլ չարաշահմամբ:

7. Լրատվամիջոցներ:

Նորմալ հասարակության մեջ լրատվամիջոցներն անփոխարինելի դեր ունեն: Միայն նրանց միջոցով կարող են մարդիկ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալ: Հայտնի է, որ տեղեկատվությունը շատ հաճախ կանխորոշում է մարդու դիրքորոշումը: Հետևաբար՝ երբ լրատվամիջոցները ցանկալին ներկայացնում են իրականի փոխարեն, գրկում են հասարակությանը իմունային համակարգից՝ սպառնալով նրա գոյությանն ընդհանրապես: Ահա թե՛ ինչու են լրատվամիջոցներին կոչում չորրորդ իշխանություն:

1. Դու հասարակության խիղճն ես: Դու պարտավոր ես օբյեկտիվ լինել:
2. Լրագրությունը պատասխանատվություն է, այլ ոչ թե՛ փեշակ:
3. Ինչո՞ւ ես խաբում մարդկանց: Նրանք պետք է իմանան ճշմարտությունը:
4. Քեզ այդքան դո՞ւր է գալիս վարժեցված շնիկի կերպարը: Ինչո՞ւ դարձար լրագրող:
5. Խոսքը չպետք է վաճառվի: Լրագրությունը մարմնավաճառություն չէ:
6. Վաճառված ու վարժեցված լրագրողը միշտ էլ արհամարհվելու է:

8. Ընտրակեղծիքներ:

Ընտրակեղծիքը խաբելու ձև է: Միշտ էլ կլինեն մարդիկ, որ կփորձեն խաբելու միջոցով ինչ-որ բան շահել: Եվ գոնե միայն խաբված լինելու զգացողությունից խուսափելու համար մարդիկ փորձում են չխաբվել:

1. Եթե՛ն անխուսափելի է ընտրակեղծիքը, թող քո քվեն անվավեր ճանաչվի:
2. Ամեն ինչ արա, որ քո փոխարեն չընտրեն: Գոնե միայն այն պատճառով, որ դա պարզապես շատ վիրավորական է:
3. Լավ ապագայի համար պայքարել է պետք:

2 Ընտրական իրազեկության բարձրացման նյութեր

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրական իրավունք

⇒ **Ա. Ովքե՞ր ունեն ընտրելու իրավունք:**

- | 18 տարին լրացած ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք,
- | արտասահմանում բնակվող կամ գտնվող ՀՀ քաղաքացիները,
- | հաշմանդամները,
- | զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքների անցնող զինծառայողներ համարվող քաղաքացիները,
- | տվյալ համայնքում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող § հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացին, որի անձնագրում կատարված է նշում բնակության վայրի մասին:

Ուշադրություն: Օրենքով սահմանված կարգով պատասխանատվության է հանգեցնում. քաղաքացու ընտրական իրավունքի իրականացմանը խոչնդոտելը, որի դեպքում պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

⇒ **Բ. Ովքե՞ր չունեն ընտրելու իրավունք:**

- | դատարանի վճռով անգործունակ ճանաչված,
- | դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները,
- | փախստականները, ովքեր չեն ընդունել ՀՀ քաղաքացիություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

⇒ **1. Ինչպիսի՞ն է Ազգային ժողովի կազմը:**

Ազգային ժողովի պատգամավորների թիվը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

Հիշիր: Ազգային ժողովի պատգամավորների թիվը հարյուր երեսունմեկն է:

⇒ **2. Ինչպիսի՞ն է ՀՀ ԱԺ ընտրական համակարգը**

Ա. Ազգային ժողովի ընտրությունները անցկացվում են համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով:

Բ. 90 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, հանրապետության ամբողջ տարածքն ընդրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից:

Գ. 41 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր:

Մեկնաբանություն՝ Համամասնական ընտրակարգը պատգամավորների ընտրության այն ձևն է, ըստ որի թեկնածուներն ընտրվում են քվեների հինգ տոկոսանոց սահմանը անցած կուսակցությունների ներկայացուցիչներից:

⇒ 3. Տրադիցիոնալ ընտրական իրավունքը ԱԺ ընտրությունների ժամանակ:

Ա. Յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք՝ բազմամասնադատ ընտրատարածքում եւ մեկ ձայնի իրավունք՝ միամասնադատ ընտրատարածքում:

Բ. Քաղաքացին կարող է առաջադրվել միայն մեկ ցուցակով եւ միայն մեկ մեծամասնական ընտրատարածքում:

⇒ 4. Ինչպիսի՞ն են պատգամավորության թեկնածուին առաջադրվող պահանջները:

Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 64 հոդվածի համաձայն՝ պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Բ. Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները, սոցիալական ապահովության մարմինների (ծառայությունների) աշխատակիցները: Վերոհիշյալ անձինք Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել իրենց լիազորությունները վայր դնելու դեպքում:

Գ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները: Վերոհիշյալ անձինք Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել իրենց լիազորությունները վայր դնելու դեպքում:

Հավելում: Պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առօրյային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք բացի գիտական, մանկավարժական § ստեղծագործական աշխատանքից: Պատգամավորը իր լիազորությունները կատարում է մշտական հիմունքներով: Պատգամավորի կարգավիճակը § գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ § օրենքով:

ԻՆՉՊԵՄ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

ԱՌՍԶԱԴՐՈՒՄԸ ԵՒ ԳՐԱՆՑՈՒՄԸ

⇒ 5. Ինչպիսի՞ն պետք է լինի պատգամավորության թեկնածու առաջադրելու իրավական կարգը:

Ա. Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները:

Բ. Կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության նախընտրական դաշինք կազմավորելու դեպքում:

Գ. Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններն ընտրությունների ընթացքում չեն կարող ընդգրկվել այլ կուսակցությունների դաշինքում:

Դ. Կուսակցությունների դաշինքում ընդգրկվելու որոշումն ընդունվում է կուսակցության մշտապես գործող մարմնի որոշմամբ:

Ե. Կուսակցությունների դաշինքը գրանցվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընտրությունները նշանակելուց հետո կուսակցությունների մշտապես գործող մարմինների որոշումը ներկայացնելուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում:

Չ. Կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները կազմվում են դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած առանձին ցուցակից: Դաշինքի ընտրական ցուցակներում թեկնածուների հերթականությունը որոշվում է դաշինքում ընդգրկված կուսակցությունների համատեղ խորհրդակցությունների ընթացքում:

Է. Կուսակցությունների դաշինքից որևէ կուսակցության դուրս գալու դեպքում կուսակցությունների դաշինքի ցուցակից հանվում են այդ կուսակցության ներկայացրած թեկնածուների անունները:

Ը. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները:

Նախաձեռնություններ

...Պատգամավորին չի կարելի ձեռնարկել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահին:

6. Ինչպե՞ս է լինի Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու կարգը:

Ա. Կուսակցություններն Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու հայտը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ իրենց մշտապես գործող մարմնի որոշմամբ: Կուսակցությունների դաշինքներն Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու հայտը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշմամբ:

Բ. Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրել պատգամավորության թեկնածուների միայն մեկ ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից թեկնածուների առանձին ցուցակ առաջադրել: Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 15 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին: Համամասնական ընտրակարգով կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև անկուսակցականներ:

Գ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության հայտին կցվում են՝

- կուսակցության կանոնադրությունը (կուսակցությունների դաշինքի դեպքում՝ դաշինքում ընդգրկված բոլոր կուսակցությունների կանոնադրությունները), դաշինքի անվանման վերաբերյալ փաստաթուղթ.
- կուսակցության մշտապես գործող մարմնի որոշումն Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու մասին ցուցակի վերաբերյալ, որում համարակալմամբ նշվում են առաջադրվող թեկնածուների կուսակցական պատկանելությունը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, անձնագրի համարը, հաշվառման վայրը, աշխատանքի վայրը և պաշտոնը (գբաղմունքը).
- նվազագույն աշխատավարձի 2500-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.
- տեղեկանք՝ կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուների վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու մասին.
- տեղեկանք՝ կուսակցությունների ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուների վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.
- կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուների գրավոր հայտարարությունը՝ պատգամավորության թեկնածու գրանցվելու համաձայնության մասին.
- հայտարարագիր՝ իր սեփականության (ունեցվածքի) և վերջին մեկ տարում իր և իր ընտանիքի անդամների եկամուտների մասին.
- կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների ներկայացրած առանձին ընտրական ցուցակները:

Դ. Սույն հոդվածի Գ-րդ կետի Դ-րդ և Ե-րդ ենթակետերում նշված տեղեկանքները պատգամավորության թեկնածու առաջադրված քաղաքացուն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, տրամադրում է լիազորված պետական մարմինը՝ դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ե. Կուսակցությունն իր մշտապես գործող մարմնի որոշմամբ, իսկ կուսակցությունների դաշինքը՝ անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցվելու համար ներկայացնում է մինչև 3 լիազոր ներկայացուցչի տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, աշխատանքի վայրը և պաշտոնը (գբաղմունքը)):

Ձ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով Ազգային ժողովում մանդատներ ստացած կուսակցության ընտրական գրավի գումարը վերադարձվում է, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), իսկ ընտրական գրավը նախընտրական հիմնադրամից վճարված լինելու դեպքում՝ նախնորտրական հիմնադրամ, իսկ մանդատներ չստացած կուսակցությունների ընտրական գրավը փոխանցվում է պետական բյուջե:

Է. կուսակցության ընտրական ցուցակը համարվում է առաջադրված, եթե դրա առաջադրումը պաշտպանել է առնվազն 30 հազար քաղաքացի՝ իրենց կամքը ստորագրությամբ արտահայտելով առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Ի տարբերություն ՀՀ նախագահական ընտրությունների՝ ԱԺ ընտրությունների ժամանակ նույն անձը կարող է առաջադրվել մի քանի անգամ որպես պատգամավորության թեկնածու:

7. Ինչպիսիք պետք է լինի Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելու կարգը:

Ա. կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցվում է, եթե կուսակցությունը սահմանված ժամկետում սույն օրենսգրքով սահմանված կարգով ներկայացրել է՝

- նվազագույն աշխատավարձի 2500-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.
- տեղեկանք՝ կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուների՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու մասին.
- տեղեկանք՝ կուսակցությունների ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուների՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.
- թեկնածու առաջադրված քաղաքացու գույքի եւ եկամուտների հայտարարագիրը, որի ընթացակարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Բ. կուսակցության ընտրական ցուցակի գրանցման վերաբերյալ առարկություն լինելու դեպքում այն դրվում է քվեարկության: Առարկություն չլինելու դեպքում ցուցակը համարվում է գրանցված: կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը մերժվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:

Գ. կուսակցության ընտրական ցուցակի գրանցման հարցը քննարկելիս հանձնաժողովի նիստին իրավունք ունի ներկա գտնվել կուսակցության լիազոր ներկայացուցիչը:

8. Ինչպիսիքն է կուսակցության ընտրական ցուցակի եւ դրանում ներառված թեկնածուի գրանցումը, մերժելը կամ անվավեր ճանաչելու կարգը:

Ա. կուսակցության ընտրական ցուցակի գրանցման համար ներկայացված փաստաթղթերում անճշտություններ հայտնաբերելու կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը 48 ժամ ժամանակ է տալիս նշված անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում գրանցումը մերժվում է, իսկ անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու դեպքում կուսակցության ցուցակը գրանցվում է:

Բ. կուսակցության ընտրական ցուցակում ներառված քաղաքացու գրանցման համար նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում անճշտություններ հայտնաբերելու կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը 48 ժամ ժամանակ է տալիս նշված անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում գրանցումը մերժվում է:

Գ. կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը մերժելու դեպքում ընտրական գրավի գումարը փոխանցվում է, բացառությամբ, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերում անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու համար սահմանված 48 ժամվա ընթացքում կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) դիմել է գրավը հետ ստանալու պահանջով պետական բյուջե:

Դ. կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

- կուսակցության ընտրական ցուցակի վրա տարածվում են սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները.
- գրանցման համար ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Ե. Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումը համարվում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

- թեկնածուի վրա տարածվում են սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները.
- նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Նման դեպքում թեկնածուն հանվում է ցուցակից:

Զ. Կուսակցության ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում ընտրական գրավը, ինչպես նաև նախընտրական հիմնադրամում եղած միջոցները, փոխանցվում են պետական բյուջե:

Է. Կուսակցության ընտրական ցուցակի կամ դրանում գտնվող անձի գրանցումն անվավեր է ճանաչվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:

Ը. Կուսակցության ընտրական ցուցակի կամ դրանում ներառված քաղաքացու գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը, այն ընդունելու օրվանից եռօրյա ժամկետում, կարող է բողոքարկվել դատարան:

Թ. Կուսակցության ընտրական ցուցակի կամ դրանում ներառված քաղաքացու գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու որոշումն անօրինական ճանաչելու մասին դատարանի որոշման հիման վրա կուսակցության ցուցակը կամ դրանում ներառված քաղաքացին ճանաչվում է գրանցված կամ վերագրանցված:

<p>ՆԻՇԻՐ Ստորագրություններ հավաքելու նպատակով արգելվում է անձամբ կամ որձե այլ եղանակով քաղաքացիներին դրամ, արժեթղթեր, սննդամթերք, ապրանքներ տալը (խոստանալը) կամ անհատույց ծառայություններ մատուցելը (խոստանալը):</p>
--

⇒ **9. Ինչպիսին է կուսակցության ընտրական ցուցակի եւ դրանում ներառված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կարգը:**

Ա. Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

- ներկայացվել է դիմում ինքնաբացարկի մասին.
- խախտվել է սույն օրենսգրքի 18 հոդվածի 8-րդ կետով նախատեսված պահանջը. խախտվել է սույն օրենսգրքի 25 հոդվածի 7-րդ կետով նախատեսված պահանջը.
- կուսակցությունը լուծարվել է:

Բ. Կուսակցությունն ինքնաբացարկի մասին դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող է ներկայացնել քվեարկությունից ոչ

ուշ, քան 10 օր առաջ:

Գ. Ինքնաբացարկի մասին դիմումի հիման վրա կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եւ նրա ընտրական գրավը, ինչպես նաև նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Դ. Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը սույն օրենսգրքի 18 հոդվածի 8-րդ, 25 հոդվածի 7-րդ կետերով նախատեսված հիմքով ուժը կորցրած ճանաչելիս նրա ընտրական գրավի գումարը, ինչպես նաև նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:


Ե. Կուսակցության ընտրական ցուցակում ներառված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա՝

- ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին.
- մահացել է
- խախտել է սույն օրենսգրքի 18 հոդվածի 8-րդ կետով նախատեսված պահանջը.
- խախտել է սույն օրենսգրքի 25 հոդվածի 7-րդ կետով նախատեսված պահանջը.
- կորցրել է ընտրական իրավունքը:

⇒ **10. Ինչպիսին է Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների կողմից առաջադրելու կարգը:**

Ա. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները:

Բ. Կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները յուրաքանչյուր ընտրատարածքում իրավունք ունեն առաջադրել մեկ թեկնածու:



Գ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրումն իրականացվում է կուսակցության մշտապես գործող մարմնի կուսակցությունների դաշինքները Ազգային

ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրումն իրականացնում են դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշմամբ որոշմամբ:

Դ. Կուսակցությունը կարող է թեկնածու առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհամարվող անձի:

⇒ **11. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելի քաղաքացիների կողմից**

Ա. Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող առնվազն 50 քաղաքացի կարող են կազմել Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու առաջադրելու համար նախաձեռնող խումբ:

Բ. Նախաձեռնող խումբը գրավոր դիմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ գրանցվելու խնդրանքով, որի համար, բացի դիմումից, ներկայացնում է Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու առաջադրելու եւ երկու լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին նախաձեռնող խմբի ժողովի ընդունած որոշումը, ինչպես նաև նախաձեռնող խմբի երկու լիազոր ներկայացուցիչների մասին՝ սույն օրենսգրքի 67 հոդվածում նշված տվյալները:

Գ. Նախաձեռնող խմբի ժողովի ընդունած որոշումը պետք է պարունակի նախաձեռնող խմբի անդամների ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը, բնակության վայրը, հասցեն եւ ստորագրությունը: Նախաձեռնող խմբի ցուցակների օրինակառությունն ստուգում է գրանցող ընտրական հանձնաժողովը՝ երկօրյա ժամկետում, կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

⇒ **12. Ինչպիսին պետք է լինի Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրելու պահանջները:**

Ա. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրելու մասին կուսակցության, կուսակցությունների դաշինքների մշտապես գործող մարմնի ընդունած կամ կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշումը եւ նախաձեռնող խմբի դիմումը (որոշումը) պետք է բովանդակեն ընտրատարածքի համարը եւ առաջադրվող թեկնածուի մասին հետեւյալ տեղեկությունները՝

- ազգանունը, անունը, հայրանունը.
- ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.
- հաշվառման վայրը.
- աշխատանքի վայրը եւ պաշտոնը (զբաղմունքը).
- կուսակցական պատկանելիությունը.
- անձնագրի համարը:

Բ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրելու մասին կուսակցության կուսակցությունների դաշինքների մշտապես գործող մարմնի եւ նախաձեռնող խմբի ընդունած որոշումների հետ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացվում առաջադրված պատգամավորության թեկնածուի գրավոր հայտարարությունը՝ տվյալ ընտրատարածքում գրանցվելու համաձայնության մասին:

⇒ **13. Ինչպիսի՞ն պետք է լինի Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուների գրանցման կարգը:**

1. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուները գրանցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

2. Ազգային ժողովի ընտրություններից առնվազն 45 օր առաջ կուսակցությունները եւ նախաձեռնող խմբերը մեծամասնական ընտրակարգով թեկնածուների գրանցման համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում:

- 2) նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով մուծված ընտրական գրավի անդորրագիրը.
- 3) տեղեկանք՝ վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ.
- 4) տեղեկանք՝ վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին:
Թեկնածուն նշված փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացնում անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:
3. Ազգային ժողովի պատգամավոր ընտրելու, ինչպես նաև թեկնածուների օգտին տրված ձայների 5 տոկոսից ավելի ձայներ ստանալու դեպքում ընտրական գրավի գումարը վերադարձվում է:
4. Առաջադրված թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստին իրավունք ունի ներկա գտնվել առաջադրված թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը կամ նրան առաջադրող կուսակցության լիազոր ներկայացուցիչը:
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն առաջադրված թեկնածուի գրանցումը մերժում է, եթե՝
1) թեկնածությունը պաշտպանող պաշտոնաթերթիկներն ստուգելուց հետո վավեր ստորագրությունների թիվը պակաս է 500-ից.
2) թեկնածու առաջադրված քաղաքացու վրա տարածվում են սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները.
3) գրանցման համար ներկայացված փաստաթղթերը կեղծված են:
5. Պատգամավորության թեկնածու առաջադրված քաղաքացու գրանցման վերաբերյալ առարկություն լինելու դեպքում այն դրվում է քվեարկության: Գրանցումը մերժվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Առարկություն չլինելու դեպքում թեկնածուն համարվում է գրանցված:
6. Պատգամավորության թեկնածու առաջադրված քաղաքացու գրանցումը մերժելու դեպքում նրա ընտրական գրավի գումարը վերադարձվում է:
7. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պատգամավորության թեկնածուի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝
1) թեկնածուի վրա տարածվում են սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները.
2) գրանցման համար ներկայացված փաստաթղթերը կեղծված են:
Թեկնածուի գրանցումը ճանաչվում է անվավեր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:
8. Թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում նրա ընտրական գրավի գումարը եւ նախընտրական հիմնադրամում եղած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:
9. Պատգամավորության թեկնածուի գրանցումը մերժելու դեպքում կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ ընդունման օրվանից եռօրյա ժամկետում:
10. Պատգամավորության թեկնածուի գրանցումը մերժելու դեպքում կամ անվավեր ճանաչելու որոշումն անօրինական ճանաչելու մասին դատարանի որոշման հիման վրա նա ճանաչվում է գրանցված կամ վերագրանցված:

14. Ինչպիսի՞ն պետք է լինի Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրած պատգամավորության թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կարգը:

Ա. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրած պատգամավորության թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա՝

- կորցրել է ընտրական իրավունքը.
- ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին.
- մահացել է.
- խախտել է սույն օրենսգրքի 18 հոդվածի 8-րդ կետով նախատեսված պահանջը.
- խախտել է սույն օրենսգրքի 25 հոդվածի 7-րդ կետով նախատեսված պահանջը:

Բ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում նրա ընտրական գրավի գումարը (բացառությամբ մահվան դեպքի) եւ նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե: Մահվան հետևանքով գրանցումն ուժը կորցրած ճանաչելու դեպքում ընտրական գրավի գումարը փոխանցվում է ժառանգներին:

ՊԱՏԳԱՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

⇒ 15. Որո՞նք են Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների իրավահավասարությունը:

Պատգամավորության թեկնածուներն ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ:

⇒ 16. Որո՞նք են Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների իրավունքները, պարտականությունները եւ գործունեության նրաշխիքները:

Ա. Այն թեկնածուները, ովքեր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ են, գրանցման պահից մինչեւ ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումն ազատվում են իրենց պաշտոնական պարտականությունները կատարելուց:

Բ. Թեկնածուներն ազատվում են գորահավաքներից, ժամկետային զինվորական ծառայությունից եւ ուսումնավարժական հավաքներից մինչեւ ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը:

Գ. Ընտրություններին մասնակցելու ժամանակահատվածը թեկնածուի համար համարվում է աշխատանքային ստաժ այն մասնագիտությամբ, որով նա աշխատել է մինչեւ գրանցվելը:

Դ. Թեկնածուները, ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ, իրավունք ունեն հանել իրենց թեկնածությունը: Թեկնածությունը հանելու դեպքում ընտրական գրավը եւ նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Ե. Կուսակցությունները, ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ, իրավունք ունեն հանել իրենց ընտրական ցուցակները, ինչպես նաեւ հանել ցուցակում գրանցված ցանկացած թեկնածուի՝ կուսակցության մշտապես գործող մարմնի (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած) որոշմամբ: Այդ որոշումն անհապաղ ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Քվեարկության ավարտից հետո կուսակցության ընտրական ցուցակում փոփոխություններ կատարել չի թույլատրվում:

Զ. Ընտրությունների ժամանակահատվածում Ազգային ժողովի՝ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուները կարող են կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

ՀԻՇԻՐ: Ժամը 20:00-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց դեռևս չքվեարկված քաղաքացիներին ունեն քվեարկելու իրավունք:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

⇒ 17. Ո՞րն է պատգամավորության թեկնածուի եւ կուսակցության նախընտրական հիմնադրամը § նրա իրավահավասարած գործողությունները:

Ա. Պատգամավորության թեկնածուն եւ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակ առաջադրած կուսակցությունը նախընտրական քարոզչություն իրականացնելու համար իրենց լիազոր ներկայացուցչի անունով կարող են հիմնել նախընտրական հիմնադրամ, որը ձեւավորվում է սույն օրենսգրքի 25 հոդվածում նշված կամավոր մուծումներից:

Պատգամավորության թեկնածուն եւ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակներ առաջադրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) ընտրական գրավը վճարելու համար կարող է օգտագործել նախընտրական հիմնադրամի միջոցները:

Բ. Թեկնածուն իրավունք ունի իր հիմնադրամում մուծում կատարելու Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով, կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքում ընդգրկված յուրաքանչյուր կուսակցություն՝ համապատասխանաբար կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի հիմնադրամում՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով:

Գ. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է թեկնածուի եւ կուսակցության նախընտրական հիմնադրամներում կատարել մինչեւ նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով, իսկ յուրաքանչյուր իրավաբանական անձ՝ մինչեւ նվազագույն աշխատավարձի 150-ապատիկի չափով կամավոր մուծում:

Դ. Նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուն իրավունք ունի ծախսել նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը չզերազանցող գումար, իսկ կուսակցությունը՝ նվազագույն աշխատավարձի 60000-ապատիկը չզերազանցող գումար:

Ե. Սույն օրենսգրքով սահմանված կարգով գրանցված պատգամավորության թեկնածուները եւ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները նախընտրական քարոզչություն իրականացնելու համար իրավունք ունեն օգտագործել միայն իրենց նախընտրական հիմնադրամի միջոցները:

Զ. Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն օգտագործվում են սույն օրենսգրքի 79 հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԱՍՓՈՓՈՒՄԸ

⇒ 18. Ինչպես պետք է լինի քվեաթերթիկների լրացումը:

Ա. Ազգային ժողովի՝ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով ընտրություններն անցկացվում են առանձին քվեաթերթիկներով:

Բ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկում նշվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) անվանումները՝ այբբենական հերթականությամբ, ինչպես նաեւ ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները եւ հայրանունները:

Գ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկները տպագրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատվերով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով քվեաթերթիկները քվեարկության նախորդ օրը տրամադրում է տեղամասային ընտրական հանձնաժողովներին: Քվեաթերթիկները պետք է լինեն միեւնույն գույնի մեկ տպագրատան միջոցով:

Դ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուների ազգանունները, անունները եւ հայրանունները՝ ազգանվան այբբենական հերթականությամբ եւ առաջադրող կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների անվանումները, իսկ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրվելու դեպքում՝ քաղաքացիական նախաձեռնություն« բառերը:

Ե. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկները տպագրվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի պատվերով: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության նախորդ օրը քվեաթերթիկները տրամադրում է տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

Զ. Քվեաթերթիկները պետք է լինեն միեւնույն գույնի եւ տարբերվեն սույն հոդվածի 2-րդ կետում նշված քվեաթերթիկների գույնից:

Է. Քվեաթերթիկները հատկացվում են տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թվից 3 տոկոս ավելի քանակով:

ՆԻՇԻՐ: Արգելվում է քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում կամ սենյակում որևէ այլ անձի ներկայությունը բացառությամբ այն դեպքի, երբ ընտրողը չունի քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն և դիմել է այլ անձի օգնության համար:

⇒ 19. Ինչպե՞ս պետք է լինի Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգերով ընտրությունների արդյունքներն ամփոփելը:

Ա. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքներում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների հիման վրա, սույն օրենսգրքի 63² հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում, ամփոփում է ընտրությունների արդյունքները եւ ընդունում հետևյալ որոշումներից մեկը՝

- Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին
- Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր ճանաչելու մասին.

Բ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են վավեր ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն 5 և 7 տոկոսը: Եթե վավեր ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն 5 և 7 տոկոս ձայներ ստացել է ընդամենը մեկ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակ, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են հաջորդ երկու՝ համապատասխանաբար առավելագույն տոկոս ձայներ ստացած կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները): Եթե Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցում է մինչև 3 կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են բոլոր կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները):

Գ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են կուսակցությունների ընտրական ցուցակների միջև՝ նրանց օգտին տրված ձայների համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր ցուցակին կողմ տրված ձայների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ տրված ձայների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են:

Դ. Մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն ցուցակին, որին կողմ տրված ձայների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում հարցը լուծվում է վիճակահանությանը՝ Լենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Ե. Կուսակցության ընտրական ցուցակներով ընտրված է համարվում այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին:

Զ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրված թեկնածուին հասանելիք մանդատը, եթե նա ընտրվել է նաև Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով, տրվում է ցուցակի հաջորդ թեկնածուին:

Է. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ը. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում:

Թ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 10 և ոչ ուշ, քան 20 օր հետո, սույն օրենսգրքով սահմանված կարգով և կուսակցությունների նույն կազմով, անցկացվում է վերաքվեարկություն:

⇒ 20. Ինչպե՞ս է իրականացվում Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներն ամփոփելը:

Ա. Քվեարկության ամփոփիչ արձանագրությունների տվյալների հիման վրա, սույն օրենսգրքի 63¹-րդ հոդվածով (Լենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրությունների նախնական արդյունքների հիման վրա, ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 28 ժամ հետո, հրապարակում է ընտրությունների նախնական արդյունքները՝ թեկնածուներից և կուսակցություններից յուրաքանչյուրի օգտին տրված ձայների թիվը, քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը և անճշտությունների չափը) սահմանված կարգով և ժամկետում, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ըստ ընտրատարածքների ամփոփում է ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը՝

- պատգամավոր ընտրվելու մասին.
- պատգամավորի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին.
- պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչելու մասին.

Բ. Պատգամավոր ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է առավելագույն «կողմ» ձայներ:

Գ. Եթե քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում մասնակիցների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

Դ. Եթե հավասար թվով առավելագույն «կողմ» ձայներ ստացել են 2 եւ ավելի թեկնածուներ, ապա նրանց միջև անցկացվում է վիճակահանություն՝ ընտրված թեկնածուին որոշելու համար:

Ե. Պագամավորի ընտրությունն անվավեր է ճանաչվում, եթե ձայների քանակի վրա ազդող անճշտությունների չափը բացառում է ընտրված թեկնածուին պարզելու հնարավորությունը, կամ ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա:

Ուշադրություն
Ընտրության օրն ընտրողն իրավունք չունի ընտրական տեղամասի կենտրոնում հայտարարել, թե որ թեկնածուի օգտին կամ դեմ է քվեարկել կամ արդեն քվեարկվել է: Արգելվում է որՏԷ

Զ. Պատգամավորի ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

- քվեարկված մեկ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ.
- ընտրված թեկնածու մահացել է մինչև ընտրությունների արդյունքների ամփոփելը:

Է. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո՝ երկու ժամվա ընթացքում, հաղորդագրություն է ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ը. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա

ժամկետում:

Թ. Պագամավորի ընտրությունն անվավեր ճանաչվելու դեպքում այդ մասին որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 10 եւ ոչ ուշ քան, 20 օր հետո, սույն օրենսգրքով սահմանված կարգով, անցկացվում է վերաքվեարկություն: Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների ժամանակ վերաքվեարկության արդյունքները անվավեր ճանաչվելու դեպքում այդ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 30, եւ ոչ ուշ, քան 40 օր հետո անցկացվում է նոր ընտրություն:

Ժ. Պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում այդ մասին որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 30 եւ ոչ ուշ, քան 40 օր հետո անցկացվում է նոր ընտրություն:

Ի. Նոր ընտրությունն անցկացվում է թեկնածուների նոր առաջադրմամբ եւ արտահերթ ընտրությունների համար սահմանված ժամկետներում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼԸ

⇒21. Ինչպե՞ս է իրականացվում Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու, անցկացնելու եւ պատգամավորության թեկնածուներ առաջադրելու եւ գրանցելու ժամկետները:

Ա. Ազգային ժողովի հերթական ընտրություններ անցկացվում են նրա լիազորությունների ավարտին նախորդող 60 օրվա ընթացքում:

Բ. Հերթական ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 100 օր առաջ:

Գ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը կուսակցությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 75 եւ ոչ ուշ, քան 70 օր առաջ, մինչև ժամը 18 :00-ն:

Օրենքով սահմանված կարգով պատասխանատվության են հանձնվում.

- 1 քվեարկության արդյունքները կնդծելը կամ աղավաղելը
- 1 ընտրությունների արդյունքները դիտավորությամբ աղավաղելը
- 1 քվեարկության § ընտրությունների արդյունքների մասին արձանագրությունները կնդծելը

Դ. Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Ե. Կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 40 եւ ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Զ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 75, եւ ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն, իսկ առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկները ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովից ստանում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 65, եւ ոչ ուշ, քան 60 օր առաջ:

Է. Թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Ը. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 40 եւ ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

⇒ **22. Ինչպե՞ս պետք է լինի Ազգային ժողովի լրացուցիչ ընտրություններ նշանակելը եւ անցկացնելը :**

Ա. Պատգամավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հետևանքով Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով մանդատի թափուր մնալու դեպքում համապատասխան ընտրատարածքում անցկացվում են լրացուցիչ ընտրություններ:

Բ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություններ անցկացվում են հերթական ընտրությունների համար սահմանված կարգով, եւ այդ մանդատը թափուր մնալուց հետո՝ 80-օրյա ժամկետում:

Գ. Ազգային ժողովի լիազորությունների չորրորդ տարում մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություններ չեն անցկացվում:

Դ. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրված եւ լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին: Եթե կուսակցության ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:

⇒ **23. Ինչպե՞ս պետք է լինի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելը եւ անցկացնելը :**

Ա. Արտահերթ ընտրություններ անցկացվում են Ազգային ժողովն արձակելուց ոչ շուտ, քան 30 եւ ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:

Բ. Արտահերթ ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության Նախագահը հրամանագիր է հրապարակում Ազգային ժողովն արձակելու մասին հրամանագրի հետ միաժամանակ:

Գ. Կուսակցության կողմից Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Դ. Կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 եւ ոչ ուշ, քան 20 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Ե. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20 եւ ոչ ուշ, քան 15 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

Զ. Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 15 եւ ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18 :00-ն:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐԸ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ա. Ուրբե՞ր կարող են լինել վստահված անձինք:

- | Սահմանադրական դատարանի անդամները
- | դատավորները, ներքին գործերի ազգային անվտանգության, պաշտպանության նախարարությունների աշխատակիցները
- | դատախազության աշխատակիցները,
- | հարկային § մաքսային մարմինների աշխատակիցները,
- | սոցիալական ապահովության մարմինների (ծառայությունների) աշխատակիցները,
- | զինծառայողները

- | հոգճորականները
- | ընտրական հանձնաժողովի անդամները
- | ժնտական ՁԼՄ-ների ղեկավարները
- | օտարերկյա քաղաքացիները:

Բ. Ո՞րն է վստահված անձանց դերը:

Վստահված անձինք պետք է պաշտպանեն իրենց թեկնածուի շահերը ընտրական հանձնաժողովներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների հետ փոխհարաբերություններում:

Գ. Գրանցվում են արդյո՞ք վստահված անձինք:

ԱՅՈ: Թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, թեկնածուի գրանցվելուց հետո կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում վստահված անձանց վկայականներ ստանալու հայտը, ինչպես նաև ցուցակ նշելով վստահված անձանց ազգանուն, անուն, հայրանուն: Վստահված անձը համարվում է գրանցված, թեկնածուի կողմից վկայականը նրա անվամբ լրացման պահից:

Դ. Ինչպիսի՞ փաստաթուղթ է տրվում վստահված անձանց:

Վստահված անձանց տրվում են կնքած վկայականներ՝ դրա վերաբերյալ հայտ ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:

Ե. Ովքե՞ր ունեն դիտորդական առաքնության իրավունք:

- | Միջազգային կազմակերպությունները,
- | օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները,
- | օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնք կանոնադրության խնդիրները ներառում են ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր,
- | ՀՀ այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրության խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Զ. Ո՞րն է դիտորդի դերը:

Դիտորդի դերն է դիտարկել ընտրությունները և չմիջամտել ընտրական գործընթացին: Դիտորդը պետք է դիտումներն իրականացնի ինքնուրույն, անկախ և անկողմնակալ:

1.1 ՀԻՇԻՐ

Դիտորդական առաքելության իրավունք ունեցող կազմակերպությունները, անձինք իրավունք չունեն աջակցել որևէ թեկնածուի, ինչպես նաև միջամտել:

Է. Հավատարմագրվում են արդյո՞ք դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները § անձինք:

ԱՅՈ: Դիտորդական առաքելություն իրականացնելու համար կազմակերպությունները § անձինք պետք է հավատարմագրման դիմումները Լենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնեն ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ: ՀՀ հասրակական կազմակերպությունները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- 1) ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրված գրանցման վկայականի պատճենը
- 2) կազմակերպության կանոնադրությունը,
- 3) դիտորդների ցուցակը:

Լենտրոնական ընտրական հանձնաժողովը, այդ դիմումներն ստանալուց ոչ ուշ քան 7 օր հետո հանձնում է հավատարմագրերը:

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե դու ուզում ես լինել տեղական դիտորդ, ապա կարող ես դիմել այն հասրակական կազմակերպություններին, որոնք Հայաստանում դիտորդական առաքելություն են հրատարակում:

Ը. Ո՞րն է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների դերը:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների դերն է լուսաբանել ընտրական հանձնաժողովների աշխատանքները § քվեարկության ընթացքը:

Թ. Հավատարմագրվում են արդյո՞ք զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները § ի՞նչ սկզբունքով:

ԱՅՈ: ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված մամուլի և ՉԼՄ-ների ներկայացուցիչները հավատարմագրվում են Լենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովում:

Լենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված ՉԼՄ-ների ներկայացուցիչներն իրավունք ունեն լուսաբանել ընտրական հանձնաժողովների աշխատանքները և քվեարկության ընթացքը ողջ հանրապետությունում, մինչդեռ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում հավատարմագրված ՉԼՄ-ների ներկայացուցիչները՝ միայն տվյալ ընտրատարածքում:

Հավատարմագրերը տրվում են մեկ տարի ժամկետով:

Ժ. Ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն ՉԼՄ-ների ներկայացուցիչները:

- 1) ՀՀ արդարադատության նախարարության կողմից տվյալ ՉԼՄ-ի գրանցման վկայականի պատճենը,
- 2) հավատարմագրվող լրատվամիջոցի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով գործառնություն, որտեղ պետք է նշվի հավատարմագրվող ներկայացուցիչների անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը և մեկ լուսանկար:

Վստահված անձի իրավունքներն են.

- | ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին (յուրաքանչյուր թեկնածուի միայն մեկ վստահված անձ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով), ներառյալ քվեաթերթիկների հաշվառման գործընթացը § արդյունքների ամփոփումը ընտրական հանձնաժողովներում,
- | բողոքարկել ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները կամ անգործությունը,
- | անարգել ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ,
- | ներկա գտնվել տեղամասային կենտրոնում քվեարկության օրը (յուրաքանչյուր թեկնածուի միայն մեկ վստահված անձ) § հետևել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին: Դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնել դիտողություններ § առաջարկություններ:

Դիտորդի իրավունքներն են.

- | ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, ներառյալ քվեաթերթիկների հաշվառման գործընթացը § արդյունքների ամփոփումը ընտրական հանձնաժողովներում,
- | ներկա գտնվել տեղամասային կենտրոնում քվեարկության օրը § հետևել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին: Դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնել դիտողություններ § առաջարկություններ,
- | անարգել ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ:

ԶԼՄ-ների ներկայացուցիչների իրավունքներն են.

- | ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, ներառյալ քվեաթերթիկների հաշվառման գործընթացը § արդյունքների ամփոփումը ընտրական հանձնաժողովներում,
- | ներկա գտնվել տեղամասային կենտրոնում, քվեարկության օրը,
- | անարգել ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ:

